

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Իրավաբանական վարչության իրավական ակտերի փորձաքննության և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր մասնագետ (30-2. 3-150)

- Բաժնի պետի հանձնարարությամբ պատրաստում է Նախարարի նորմատիվ և անհատական, ինչպես նաև Աշխատակազմի ղեկավարի անհատական և ներքին հրամանների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանը ներկայացվող գյուղատնտեսության բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.
- պատրաստում է Աշխատակազմի ստորաբաժանումների կողմից մշակված և Նախարարության քննարկմանը ներկայացվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական-փորձագիտական եզրակացություններ.
- Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական մարմիններում և այլ կազմակերպություններում ոլորտին առնչվող թեմաներով կազմակերպված խորհրդակցություններին և քննարկումներին, ինչպես նաև քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկմանը.
- իրականացնում է Նախարարի նորմատիվ բնույթի հրամանների (գերատեսչական ակտեր) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման ներկայացնելու, ինչպես նաև հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքները.
- Բաժնի պետի հանձնարարությամբ որպես նախարարության ներկայացուցիչ հանդես է գալիս դատական մարմիններում.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ , կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում).
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Իրավական ակտերի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքների, հակակոռուպցիոն ռազմավարությունների, ծրագրերի և ոլորտը կարգավորող օրենսդրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- աշխատավարձի չափը՝ 212. 309 ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 07.08.2018թ.